

պետները հեռի ապրեցան միշտ անոցմէ, և Յովհաննէս պատմիչ մերժեց կայսեր հրաւերը, ինչպէս տեսանք՝. մինչ Պետրոս զիջաւ հրաւիրին, գնաց Կոստանդնուպոլիս, և կայսերէն ու պատրիարքէն ընդունուեցաւ Ս. Սոփիայի մէջ՝, որ կրօնական հաղորդակցութեան ձև մ'էր ըստ ինքեան:

13. Իւր քեռորդին ու յաջորդը թաչիկ Բ (1054-1060) ընտրուեցաւ Սերաստիոյ մէջ, Կայսրը զինք ի Կոստանդնուպոլիս տարաւ ու հոն պահեց երեք տարի, ստիպելով որ յանձն առնու իրեն հարկատու լինել. «ընդ հարկիւ կամէին արկանել զնա», կ'ըսէ ականատես պատմիչը՝, մինչ հետագայը «վասն հաւատոյ» կը կարծեն: Սակայն ինք հակաքաղկեդոն էր համոզմամբ, որով Սինանիա սանահնեցին իւր հակաճատութիւնն «Ընդդէմ երկանեակաց» գրեր է ասոր հրամանաւ, ինչպէս կ'իմացնէ սկիզբն առանց անուան, և վերջը յայտնապէս՝ թէ «տէր թաչիկ վերադիտող Հայոց մեծաց» էր այն. որով վերնագրին բացատրութիւնը՝ «հրամանաւ տեսան Պետրոսի Հայոց վերադիտողի» սխալ և յետամուտ է:

1065 թուին Կոստանդին Տուկիծ (Գուկաս) կայսրը Սերաստիայէն ի Կոստանդնուպոլիս կը հրաւիրէ Արծրունի Ատոմ և

Արուսաշ արքայորդիքը, որոց կ'ընկերէ՝ զիտութեամբ երևելին Յակոբ քարափնեցի: Հոն կրօնական խնդիր կը յարուցուի, կը վիճեն ընդ երկար, համաձայնութեան մը կու գան զլիաւոր հարցին շուրջ, և վարդապետը «սակաւ մի վասն երկրնութեանն փրկատուսի ի կողմն Հոռոմոց դարձաւ և ... զրեաց գիր միաբանութեան Հայոց և Հոռոմոց»: Ուռայեցին թատերական տեսարան մը կը քանայ հոս, յանկարծակի մէջտեղ բերելով Բագրատունի գահընկէց ու զիտական արքայն Գագիկ, որ պոռտաբանելով կը պատռէ կայսեր առջև Յակոբայ շարադրածը, և ինք նոր կը գրէ Հայոց դաւանութիւնը՝, զոր պատմիչը յառաջ կը բերէ: Հոն Գագիկ կը նզովէ բոլոր հերետիկոսները. որոց մէջ և զՊետրոս թափիչ ու Դիոսկորոսը՝, բայց զՔաղկեդոն ոչ. այլ մանաւանդ կ'ընդունի յայտնապէս անոր սահմանը, բառացի կրկնելով Աստուածաբանին խօսքը՝. «քնոքիւնք երկուք, քանգի Աստուած և մարդ զի հոգի և մարմին. բայց որդիք ոչ երկուք և Աստուած ոչ երկուք, այլ մի»։ Հետեւաբար անիմաստ էր հակաքաղկեդոն պատմիչին անոր տուած դերը, մինչ նա իւր հարազատ գրութեան մէջ կ'ընդունի երկու բնութիւնները:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵԻԵԼԲՈՒՍ

Գ. ԴԱՐՈՒ ՄԷՋ

Ա. — Մեր առաջին յօդուածով՝ Զանգինը ուրուագծել քրիստոնէից ժողովաբաններու ծագումն Առաքելոց իսկ ժամանակէն, առանց մի որոշ ձև նշանակելու այն շինութեանց մինչև երկրորդ դարը, յորմէ յետոյ քրիստոնէական Եկեղեցին կամաց կամաց քաղաքականապէս ևս կը սկսի կազմակերպուիլ, որոշ իրաւունքներ

և ազատութիւններ ձեռք բերելով հետագայ կայսրներէն: Այլ տակաւին մինչև Գ. դարու վերջին քառորդին, իրեն շինութիւն՝ Եկեղեցի անուան արժանաւոր, նշմար թողած չէ պատմութիւնն, բացի Տիւրոսի յաղկիկալ Եկեղեցիէն, որի ստորագրութիւնն իւր տեղին պիտի տանք: Հիմնուելով այդ միակ օրինակին վերայ,

1. Բզմվ. 1927, 364. — 2. Ուռ. 105. — 3. Լասա. 60. — 4. Ուռ. 153. Անեցի. 212. — 5. Ուռ. 160-62.

— 6. Նոյն՝ 165-66. — 7. Բզմվ. 1927, 327. — 8. Ուռ. 170. — 9. Բզմ. 1927 թ. 9-10.

ներելի է ենթադրել, մինչև այդ ճոխու-
թեան հասնելու համար, պէտք է քիչ մը
կանոնախն սկսած լինին եկեղեցիների շի-
նութիւններն, որով Եկեղեցական ճարտա-
րապետութիւնն ոչ թէ կոստանդնուսէն
յետոյ, այլ գէթ աւելի քան կէս դար յա-
ռաջ արդէն՝ սկսած և շատ ալ զարգացած
պէտք է ընդունել:

Ի սկզբանէ նեղ և անձուկ էր այն ճա-
նապարհը որով պիտի գնային առաջին
երեք դարու թէ՛ քրիստոնեայք և թէ՛ ձար-
տարապետք, մինչև որ տեսնէին յաղթա-
կան Եկեղեցին, կայսերական հրամանով
և զանձով՝ Գողգոթայի գագաթին վերայ
կանգնած:

Ուստի նպատակայարմար է և արժան
թուցիկ ակնարկ մը տալ քրիստոնէից
առաջին երեք դարերու մէջ ապրած կեան-
քին, հասկանալու համար Արեւելքի և
Արեւմուտքի մէջ եղած տարբերութիւնը և
պարագաները, որ ազդեցին անոնց կրօ-
նական զարգացման և քաղաքական իրա-
ւաքանութեան:

Արդ վերագոյն գրուեցաւ որ առաջին
դարու մէջ Հռոմի իշխանութիւնը Արեւել-
քում, անտարբեր վարուեցան հանդէպ
քրիստոնէից. զի քրիստոնեայք իսկ պար-
կեշտ վարքով կ'ապրէին հեթանոսաց մէջ՝,
որով Գաղղիոնի յաջորդող Գատաւորներն
ալ, կրօնական կամ ծիսական խնդիրնե-
րու մէջ, զօր Հրէայք կը յարուցանէին
քրիստոնէից դէմ, ոչ վէճերուն կը խառ-
նուէին և ոչ զաղտնի ոտտիկանական տե-
ղեկագիր (informations) կ'ուղարկէին
Հռոմ՝ կայսեր կամ Ծերակուտին: Այս
միամիտ և ներողամիտ վիճակը տեւեց մին-
չև երկրորդ դարու սկիզբներն, երբ Առա-
քելոց առաջին աշակերտներն անգամ ան-
հատ եղած էին և նոր անբունդ յառաջ
կեցան իր, ոչ Գալիլեացի տղէտ ձկնորսներ,
այլ յունական իմաստասիրական դպրոց-
ներէն անցած մարդիկ: Բայց տակաւին
Առաքելոց աւանդութիւնն և պատուէրն
խղճի մտօք կը շարունակուէր՝ հաւատա-

րիմ մարդոց աւանդելու քրիստոսական
վարդապետութեան, հաւատոյ և խորհրդոց
զաղտնիքն: Այդ ժամանակ երեւեցան
Գնոստիկեան աղանդաւորք և ջանացին
քրիստոնէութիւնն հաշտեցնել մոգական
գիտութեանց հետ, դրանով հասարակա-
կան վէճերու նիւթ դարձուցին քրիստո-
նէութիւնն, և անով Հռոմի իշխանութեան
և զաւառի Գատաւորներուն մտածելու
նիւթ մատակարարեցին: Նոքա այնուհե-
տե պիտի սկսին նկատել զքրիստոնէու-
թիւնն իբրև ընկերվարական հաստատու-
թիւն մը և վտանգաւոր կայսերութեան
սպառնալուծեան, ատելի և խորշելի դար-
ձած, խառնուելով Հրէից հետ:

Յիրաւի երկրորդ դարու սկիզբէն միայն
տիրող իշխանութեան կապածով դարձան
առանձինն քրիստոնեայք. ցրուած էր այն
մշուշն՝ որ ցայն վայր պատեր էր Հրէա-
ներն և քրիստոնեաներն ի միասին, և հե-
թանոսք զմուսրէին որոշել միմեանցից:

Տրայանոս կայսրն արեւելեան պատե-
րագմի ժամանակ 109ին, քրիստոնէից
վտանգաւոր տարր լինելու հոսն առեր էր.
բայց առանց պաշտօնական ձև տալու,
իր թէ անձէն անձուն ի դարձին քրիս-
տոնէից զլիաւորներն, որոնք ամբաւատա-
նուած էին, հրամայեց խառնել պատե-
րագմի գերիներու և քաղաքական ոճրա-
գործներու հետ և տանիլ Հռոմ, զազաննե-
րու առջև ձգելու կրկէսին մէջ: Յետ
այսորիկ սակաւ մի զկնի 112ին Բիւլթանիոյ
և շրջակայ գաւառներից զանգատներ կը
հասնին «արդարադատ» կայսեր թէ՛ Դա-
տաւորներն կը կեղեքեն չարաչար և կը
հարստահարեն ժողովուրդը: Տրայանոս՝
լիազօր այցելու և քննիչ արտաքոյ կար-
գի, ուղարկում է իր բարեկամ Պլինիոս
կրտսերն, այր զրազտ և փաստարկա-
նախնատով: Արթից օգտուելով անշուշտ՝
Հրէայք կ'ամբաստանեն զքրիստոնեայս
իրբև անհաւատարիմ կառավարութեան:
Պլինիոս՝ կատարած քննութենէն՝ համո-
զուած էր անշուշտ որ քրիստոնեայք քա-
ղաքական յանցանք մը գործած չեն, և
բարոյական կողմից անհամեմատ վեր են

հեթանոսներից, բայց մի բան կը շփոթէ զերեկելի Հռոմայեցիներն, այն էր անոնց եղբայրութեան և հաւասարութեան կապն, զաղաւթի ծխակատարութիւններն և մեհհաններէն խուսափելն: Հեթանոս ուղեղն և մանաւանդ Հռոմի բարձագոյն պաշտօնէի, չէր ըմբռներ ըրիստոնէի մը համար մի ամենապարզ ճշմարտութիւն. «Չիք խտրի ոչ Հրէի, ոչ Հեթանոսի (Հռոմայեցւոյ), ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի... այլ խուժ դուժ, Սկիւթացի, Ժառայ, ազատ, ամենեքեան դուք՝ մի էք ի Վրիստոս Յիսուս»¹: Այս Յիսուան՝ կը մտածէր, իբրև ամբողջական, հակառակ կայսեր իշխանութեան՝ դատապարտուած էր խաչի մահուան Հռոմայեցի Պիղատոսէն. իսկ շուրջ եօթանասունեկն տարի վերջ, նա կը պաշտօնի իբրև Աստուած և հիմնադիր ըրիստոնէից ընկերութեան՝ որ ձգտում էր հանրազգային աշխարհակալ տիրապետութեան ընկերվարական սկզբունքներով: Հռոմի օրինադրէին մէջ դեռ չէր մտած որոշում մը որ մէկն և՛ անմեղ լինի և միանգամայն յանցաւոր. և սակայն ըրիստոնեայք այդպէս թուեցան Պլինիոսի, ուստի թէ և լիազօր, այս նոր տարակոյսն լուծելու համար փութաց զրեց հանդիպածն աստուածային կայսեր, իմանալու թէ նա իւր գերմարդկային իշխանութեամբ ինչպէս պիտի լուծէր կրօնա-բարոյա-քաղաքական բարդ կեանքը:

Տրայանոսէն յառաջ, հաւատում ենք, որ ըրիստոնէից դէմ հալածումն եղած չէ պաշտօնապէս, այսինքն կայսեր գիտութեամբ և ԳեպրիէՏՈՎ, անոր համար որ Պլինիոս ծնել է ըրէ առաջ Ներոնի մահից, և ծաղկել Դոմիտիանոսի և Տրայանոսի ժամանակ. զոնէ երեսուն ծիգ տարիներ պաշտօնավարած է Հռոմում, և արդ նա մինչ փաստաբանութեամբ կը պարապէր, ըրիստոնեայք միշտ հրապարակի

վրայ էին, ուստի անկարելի էր որ նորա սուր աչքերէն վրիպէր, նախընթաց մի ո՛ր և է կայսեր հրամանն ըրիստոնէից դէմ: Եթէ զոյովինն ունեցած լինէր այնպիսի դիւանագիր, նա այլ ևս տարակոյսի մէջ չէր ինկնար թէ ինչպէս վարուելու է Բիւթանիոյ ամբաստանուած ըրիստոնէից հետ. իրի նորութիւնն և իւր անձնոհասութիւնն նոր երևոյթի հանդէպ, ստիպել է Տրայանոսի խորհրդականը դիմել առ խորհրդատուն վճռական խորհուրդ մ'առնելու:

Տրայանոս զուտ հռոմայեցի, զործնականօրէն հանգոյցը կտրեց՝ զոհնով ճշմարտութիւնը՝ իշխանութեան շահերուն, արդարութիւնը՝ կայսրութեան ապահովութեան², իբրև կայսր պատասխանած էր. Դոս մի փնտռեր, երբ ամբաստանուի՞մք մէտեղէն վերադառնալ: Տրայանոս վտանգաւոր կը տեսնէ հալածանքը և հրապարակաւ տրուած տանջանքները:

Բ. — Տրայանոսի տուած պատասխանը պէտք է ընդունել առաջին պաշտօնական հրամանն (decretum) ըրիստոնէից նկատմամբ, և օրէնքի ոյժ ունենալու համար անցած է անշուշտ Բիւթակոյտի ատենանէն (Senatus consultus) պատճառաբանելով թէ անոնց եղբայրական միութիւնն և հաւասարութիւնն՝ ունի քաղաքական նկարագիր (caractère politique) որով ամբաստանեալ ըրիստոնեան դատի կ'ենթարկուի իբր քաղաքական կամ քրէական յանցաւոր և շատ զիրին բան էր. բաւական էր ամբաստանել որ կայսրը չեն սիրեր, կայսեր երկրպագութենէ (adoration) կը հրաժարին, աստուածային կայսերաց արձաններուն ոչ զոհ և ոչ խունկ կը մատուցանեն:

Ի նկատի ունենալու է նաև այն որ Պլինիոս Բիւթանիոյ ոչ կասալաբարի է և ոչ Դատաւոր, ինչպէս սովորաբար դասագրքերու մէջ կը զբուրի, առնուած Սթրոն վկայաբանութիւններէն, որոնք ըստ կամս

1. Գաղ. Գ. 27.

2. Կղ. Գ. 11.

3. Այս Տրայանոսն է զոր Դանտէ կ'ամենայ դնել դրախտ.

տին մէջ ըստ լատին ասանդութեան, իբրև ճշմարիտ և արդար ըստ բնութեան օրինաց:

գրուած և ճոխացուցուած են, այլ նա լիազօր շննիյ, ստույգիլ ուղարկուած է բարձրագոյն հրամանով քննելու մի քանի գաւառներու զատաւորների զեղծութիւնն և երկրի քաղաքական հանգամանքներն, յորոց կախուած էր կայսերութեան ապահովութիւնն Արեւելեան գաւառների մէջ, և ի յայտ կը բերէ ըրիստոնէից նշանակալից պարագան, ցուցադրելով հռոմէական հոգեւրանութիւնն և իրապաշտ մտայնութիւնն:

Տրայանոսի հրամանի ծանրութիւնն և դաժնութիւնն՝ ըրիստոնեայք սկսան անմիջապէս զգալ անոր յաջորդի Ալըրիանոսի ժամանակ, որ յունական կրթութեամբ և ճաշակով սնած, կը յուսացուէր որ աւելի մարդասէր գտնուէր քան իւր հայրը ազգիբ: Բայց ըրիստոնեայք ալ չէին ննջեր. Տրայանոսի Հրամանի դէմ իրենք ալ պատրաստուել էին կռուիլ քաղաքական հողի վերայ, պաշտպանելով իրենց գոյութիւնն, քաղաքացիական իրաւունքներն, հաւասար միւս ազգերուն և աղանդներուն որ կը վայելէին ներողամիտ ազատութիւն և պաշտպանութիւն: Առաջինը՝ Աթէնքի եպիսկոպոսն Կուադրատոս և Արիստիդէս իմաստասէր, Ալըրիանոսի քաղաք հասնելուն պէս, մատուցին իրենց ջատագովականները, և կորդեցին պատուական հակահրաման, հրահանգելով գաւառների զատաւորներն չհայածել և չհետապնդել զըրիստոնեայս իրենց կրօնից համար: Այսուհետեւ ըրիստոնեայք ի կարողութեան են գլուխ գարնելու թէ՛ Հրէից և թէ՛ Հեթանոսաց հետ:

Գ. — Օգոստոսէն մինչև Ալըրիանոս, ինքնակալներն անաստուած էին. Մարկոս Աւրելիոսն է, իմաստասէր Կայսարն, որ իւր թղթոց մէջ ցոյց կու տայ իւր գործել Նախախնամութեան կամ Աստուծոյ կամքով: Քրիստոնէութեան ազդեցութիւնն աւելի ազդու եղաւ յաջորդներու վերայ և ըրիստոնեայք կը վայելէին կատարեալ

ազատութիւն մինչև Դեկուս Սորա հաւածանքն ի սպառ քաղաքական բնոյթ ունէր, ոչ կրօնական: Արեւելքի մէջ երկու ընդդիմամարտ ուժեր կային, զինուորականն և աճող ըրիստոնէութիւնն: Կայսերաց ընտրութիւնն և կործանումն զինուորութեան կամքէն կախուած էր, սակայն ըրիստոնեայք ևս դեռ Բ. դարու կէսերին թէ՛ զինուորութեան և թէ՛ քաղաքական կեանքի մէջ՝ պատկառելի ոյժ կը կազմէին, և էին միանգամայն ատեցողք բռնակալութեան՝ միահեծան իշխանութեանն. որով Դեկուս յեղափոխութիւնէ երկու կրելով, ամենայն խստութեամբ ուզեց ընկճել այդ ընկերութիւնն, որպէս զի Նախանձորդի մը մեղածաւանջէն ապականէ ինքզինքն: Քրիստոնեայք թէև չարաչար սուսեցին, բայց աւելի ուժեղ և աւելի սերտ միութեամբ դուրս եկան յաջորդ Կոնսնրու համար՝ երկար շարք մը ջատագովներու Յուստինոսէն մինչև Որոգինէս՝ պաշտպանեցին այս դաւաճութիւնը և երբորդ դարու կէսերին ետք ըրիստոնեայք այն ազատութեամբ սկսան ապրիլ, որով Տաճկաստանի մէջ ըրիստոնեայք՝ Հայք, Յոյնք, Ասորիք հայն, օտարազգատակներու դաշնագրութեան (capitulations) յետոյ՝ Արեւելեան Մարզում բաց ի քաղաքներէն, և գաւառների մէջ շինուցանեց Եկեղեցիներ, տեղի ունեցան եկեղեցական թեմական և գաւառական ժողովներ. բնականոն կեանքով կ'ապրէին ըրիստոնեայք հեթանոսաց և հռոմայեցի քաղաքացիների հետ:

Դիոկղետիանոս իւր բոլոր կարողութեամբ և մարդասիրութեամբ առ ըրիստոնեայս, երբորդ դարու վերջերին չկարողացաւ կայսերութեան թուլացած մէջը ուղղել, ամրապնդել, ստիպուեցաւ չորս ընկերներ առնուլ լծորդ իւր իշխանութեան. այդ բաժանումն պատճառ եղաւ քաղաքական քայքայման և ըրիստոնէից չափէն աւելի զօրանալուն: Կային երկու ծայրաւ

1. Որովհետև Եկեղեցւոյ բնութեան մէջ է մի և ընդհանրական վարդապետութիւն, մի հօտ և մի հօգիւ են հաստացեալք ի միութեան ընդ Քրիստոսի և ի Քրիստոս:

2. Թէպէտև երբեմն տեղ տեղ շարքեր կը կառարուէին զոր օրինակ Լիբանան, Սասուն, Ատանա եւայլն:

գաւառներու կայսերըն Մաքսիմիանոս և Գաղեբրիոս Արեւելք, և Կոստանդ Փլորոս Արեւմուտք. առաջինը յեցան հեթանոս կուռքերու վերայ, իսկ երկրորդն Գաղղիոս և Ֆրիտանիոյ ըրիտոնէից, որոց յետոյ միացաւ նաև Սպանիա:

Դ. — Գիողիստիանոսի գազանաբարոյ գահակիցներն, իշած Պաննոնիոյ լեռնեւրէն, ծրագրեցին կործանել զԵկեղեցին, ջնջել զըրիտոնէութիւնը հրապարակի վրայէն, յոյս չունենալով շահիլ զանոնք իրենց կողմը միապետական վարելակերպի տակ. որովհետև նկատուած էին, ինչպէս ըսինք իբրև աղբիւր կամ բոյն ընկերավարական և յեղափոխական սկզբունքներու: Ձի Քրիստոսի կոչած վաստակաւններն և բեռնաւորեալներն կը կազմէին նուաճուած ազգերու զանգուածն՝ միացած սիրոյ և եղբայրութեան կապերով. քաղաքական և զինուորական խաւերու մէջ գերակշիռ ոյժ մը ձևացուցած էին, որով ահ և սարսափ կ'ազդէին «աստուածային» կայսերաց. ինքնապաշտ և անպատասխանատու իշխանութիւնն կը զգար որ կը կորսնցնէր կամաց կամաց իւր ոտքի տակի հողն, իւ որովհետև ժամանակն յղի էր անակոծելու, և քաղաքական բարդութեանց ժամանակ, ամէն մէկն կասկածէր որ ըրիտոնեայք կարող էին թշնամական դիրք բռնել երկրի բուն իշխանաւորի դէմ, ապահովելով իրենց հակառակ կերպինի յաղթութիւնն: Գահակիցներու միջէն, միահեծան կայսերութեան մէկ ծայրէն միւսը, Դ զարու սկիզբն, տարածուած էր կոստանդ Փլորոսի և իւր որդւոյն համբաւն, իբր համակիր և մղող ըրիտոնէից կուսակցութեան. ուստի Մաքսիմիանոս և Գաղեբրիոս, ուզեցին ապահովել իրենց թիկունքն, նախատեսելով իտալիոյ միջի ընդհարումներն. բռնի կորզեցին ծեղ կայսերէն ՅՕԶի ամենավարագ և փոթորկաւից հրովարտական: Փաղաքներ բնաջինջ եղան, եկեղեցիներ հինալաւորակ կործանեցան, և հրամանագրին մէջ շեշտուած էր ըրիտոնէից ժողովարանները, եկեղեցիները քանդել, աւերել, անհետ կորսնցընել:

Նելւ Բայց բռնաւորներն իրենց վառած հրդեհին ճարակ գնացին, իսկ ըրիտոնէութիւնն շարունակեց կրկնապատկուած ուժով իւր յաղթական քայլերն: Մեր Գիողիստիանոսն զգալով հեթանոսաց պարտուելուն և անկումն, ի սպառ հրաժարեցաւ իւր գահէն, և ասպարէզի վրայ անխառն երկու նախանձորդ նոր դէմքեր երեցան: Մաքսիմիանոս՝ Հռոմ և յիտալիա, և Կոստանդիանոս՝ ի Գաղղիա և Սպանիա: Մաքսիմիանոս Հռոմի մէջ երկու լարի վրայ ուզեց խաղալ կռնակ ունենալով պրետորականները, և շոյեւով ըրիտոնեայ տարրը, աւելի վախէն քան համոզումով. մինչդեռ Կոստանդիանոս համակրելի էր Հռոմի ծերակուտին և սրբելի ըրիտոնեայ տարրին. երկու հատուածներն կը նկատէին Կ. Փլորոսի որդին իբրև ապագայ ԱԶԱՍՏՐԱՄ մը: Նախախնամութիւնն առաջնորդէր էր Կոստանդիանոսը Հռոմի դռներու առջև. խաչի նշանը Հռոմէական արժիւններու և դրօշներու դէմ ճակատ առ ճակատ կանգնած էր կայսերական պարիսպներու տակ: Մաքսիստիոս չարաչար պարտուած կը կորսուի իւր կուսակիցներով Տիբերիսի ջրերու մէջ: Կոստանդիանոս Սուլայի և Պոնտէ Միլուուիոյ կրկին յաղթութիւններով, շնորհիւ Սպանիոյ և Գաղղիոյ հաւատացեալ զինուորութեան, ապահովեց ըրիտոնէութեան ապագան: Կոստանդիանոս նոյն օրն 28 ձեռն. Յ12 ամին՝ յաղթանակով կը մտնէ Հռոմ, ծերակուտն և ժողովուրդն կ'ողջունեն զնա կայսր և Ազատարար քաղաքին և Հռոմէական պետութեան:

Յաջորդ տարին Յ13ին Կոստանդիանոս և փեսան Լիլինիոս ի միասին Մեդիոլանի կամ Միլանու մէջ հրատարակեցին ՅՐՕՆՔԻ ԿԱՄ ԽԼՃԻ ԱԶԱՍՏԻԹԵԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ, որ համազգային նկարագիր ունի. քանզի ոչ թէ միայն ըրիտոնէից, այլ և կայսրութեան հոլատակ ամէն ազգերին շնորհեց ազատ պաշտամունք հայրենական կրօնին: Լիլինիոս յետոյ դրժեց Միլանու Հրովարտական՝ ծերակուտի դրամութիւնը: Կոստանդիանոս թրակիոյ դաշտերու մէջ ջախջախեց անոր բանակն, այդ փայլուն

յաղթութեամբ մնաց միահեծան տէր Հոռւ մէական կայսրութեան, և հրատարակեց պաշտօնապէս պետական կրօնը զՔրիստոնէութիւնն և ինքն անոր պաշտպանն հանդիսացաւ:

Հոռմի երկչոտ ծերակոյտն կառչած յաւաորէն հեթանոսական կրօնքին, լուսամիտ կայսեր բռնած ուղղութեան դէմ զաղտնի դաւեր սարքելու հետամտած ժամանակ, կոստանդինոս նկատելով որ քրիստոնէութեան ամուր կոռան մը չուներ իսապիտյ մէջ, ուզեց վճռական հարուածը տալ հեթանոսութեան և խոնարհեցնել զոռոգ ծերակոյտն՝ Աթորը փոխադրեց Բիւզանդիոն, քաղաքական կազմի մէջ մտուց նոր փոփոխութիւններ, համերաշխ կառավարութիւն մը ստեղծելու նպատակով կայսերութեան սահմաններու մէջ, Միանգամայն բարձրացնելու համար քրիստոսական կրօնքն, Եկեղեցին, զոր քաղաքական մարմին մը ցոյց տալու համար հեթանոս աշխարհին, կարեւոր համարեցաւ Նիկիոյ ժողովի զումարումն, յորում երեւցաւ Եկեղեցւոյ միութիւնն, հակակշիւ Հոռմի ծերակրօնական ժողովին, օժտուած իրաւաբանական և օրէնսդրական ամենայն կարողութեամբ: Այդ օրէն կապիտոլիոնի աստուածներն՝ Արեւելքէն եկած լոյսէն անշըքացան և իսաւրեցան: Բիւզանդիոն կոչուեցաւ Նոր Հոռմ: Այդ օրէն թշնամութիւն, հեռ և նախանձն բոյն դրին կապիտոլիոնի աստուածներու սրտի մէջ մինչև որ Պեպինոս, երկրորդ Կոստանդինոս, վերանորոգէ Հին Հոռմի աթոռն և պարիսպներն, Քրիստոսի Նշանի և գաղղիական յայտարարութիւն տակ:

Եւ՝ Այսչափ ընդերկար ղեգերումին, ուրուագծելու առաջին երեք դարերու քրիստոնէութեան կատարած շրջանը, նպատակն էր ցոյց տալու ա. Որ Տրայանոսէն յառաջ, հռոմէական գաւառներու Դատաւորներն, Առաքելոց ժամանակէն մինչև Բիւզանդիոն սկիզբները, միշտ Փաղղիոնի հայեցակէտով նկատեցին երկրատունէից ընկերներուն և պաշտօնական հալածանք չէ եղած քրիստոնէից դէմ: Բ. Տրայանոսն

է որ 115թ. պաշտօնական դեկրետ ուղարկում է Պլինիոսի, զըրիստոնեայս ենթարկել զատաստանի և զլիապարտութեան, այդ հրամանն պարտադիր եղաւ կայսերութեան բոլոր գաւառներու մէջ, և Դատաւորներու քննադատքներն կախում էր աւելի կամ պակաս խստութեամբ հետապնդելու զըրիստոնեայս: Գ. Թէ կողմնորդ կայսեր Հիւսթինէն յայտնի է թէ ատելի էին միայն Հրէայք, որոնք արտաքսուեցան Հոռմէն և իտալիայէն, յայտնի է նաև Փործոց զըքէն՝ Ուրիշ Հրաման ելած չէ առանձին քրիստոնէից դէմ: Իսկ Տրայանոս յաղթութեան յետոյ, Հոռմայեցիք անոնց անունը լսել չէին հանդուրժեց, և ճիշդ Տրայանոսի ժամանակն է որ Տակիտոս կը գրէ Հրէից համար «*Utrumque odium humani generis*» — անոնց հետ թարմատար կերպով կը խառնէ նաև քրիստոնէից անունը: Եթէ դա յետին դարերու նպատակաւոր ձեռքի խառնումն չէ, որպէս մեզ թուի, այդքան տգիտութիւն պատիւ չի բերել նորա սրամիտ և ըննադատ հանճարին: Դ. Շատ մը կայսերաց ժամանակ Հոռմի քրիստոնեայք երկար և խաղաղ կեանք վարեցին, որով ժամանակ ունէին մտածելու իրենց եկեղեցիներ կառուցանելու իրապիտյ մէջ և դուրսեր, և ինքնուրոյն ոճ մը ստեղծելու կրօնական ճարտարապետութեան, և զաղափարը կրնային առնուլ իրենց հեթանոս ազգակիցներէն, որոնք այլ և այլ ոճեր ստեղծեցին իրենց մեծ ու փոքր աստուածութեանց: Եւ կրորդ դարու կէսերէն յետոյ մինչև չորրորդի սկիզբն, մէկ երկու ուժեղ հալածանքներ, որոնք մի քանի գաւառներ տարածուեցան, նոցա կրօնական հալածանքէ աւելի քաղաքական բնոյթ ունէին: Գ. Հոռմի իշխանութիւնն իւր ծոցն ընդունեց երեք ծանոթ աշխարհներու աստուածութիւնները, զՔրիստոնէութիւն չէր կարող ընդունել իւր ռաւակավար ոգւոյն համար: Իշխանութեան համար դաստիարակելու խնդիր մը դարձեց էր քրիստոնէից

հետապնդումն, ինչպէս յիսուն տարիներ առաջ Եւրոպայում, միապետական իշխանութիւններ կը հետապնդէին ընկերվարականները (Socialistes) բայց յետոյ ինչպէս սոքա քաղաքական կուսակցութիւն ճանաչուելէն յետոյ իսկ, մերթ ընդ մերթ հալածանքի և նեղութեան կ'ենթարկուէին, այսպէս էր գոնեայ ըրիստոնէից վիճակներորդ դարու կէսերէն յետոյ: Է. Քառասուն տարիներ մէջ մինչև 302ի հալածումն՝ Արևելեան զաւառներում ստեղծուած էր ըրիստոնեայ Համայնք մը, որ քաղաքական ասպարէզի վրայ կը մրցէր հեթանոսաց հետ: Եւ որովհետև մարդկային ընկերութեան հոգեկան, մտաւոր և բա-

րոյական ուժերու հաւաքական արտայայտութիւնն երևցած է առաւելապէս կրօնական ստեղծագործութեանց մէջ, ինչպէս եղան հեթանոսաց համար իրենց մեհաննիւրը, այսպէս ըրիստոնէից համար իրենց տաճարները: Եւ յիրաւի կ'իմանանք Եւսեբիոսի Եկեղ. Պատմութենէն որ Արևելքի ըրիստոնեայք արդէն Գ դարու կիսէն մինչ վերջերը շատ շքեղ եկեղեցիներ կանգնեցին, որոնք հեթանոսաց նախնածր կը շարժէին: Եւ այդ եկեղեցիների միոյն նկարագրին մեզի հասած է, որով կ'իմանանք թէ Կոստանդիանոսէ շատ յառաջ կազմուեք էր Եկեղեցիական ճԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

(Շարայարելի)

Հ. Գ. ՆԱԼԱՊԵՏԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Ր Ե Ն

«Կենտրոնի յիշատակու միշտ ճանճերիմ»
ՆԱՐԵԿ

Նարդոսարոյր կանթեղ մ'աղբուն կը հալի
Լուսակարկաջ, սնարիս քով.

Դա մայրիկիս մաշած Նարեկն է, կ'այրի
Հայ սուրբերուն աղօթքով:

Ամէն գիշեր այդպէս անքուն, այդպէս լուռ,
Ո'վ երկնային սուրբ հըսկում.

Ձիւնանըման սաւանն օծուած լոյծ փըրփուր,
Ուր կ'երազեմ հեշտաքուն:

Ո'րքան վըշտի, ո'րքան սիրոյ վէրքեր հին
Կանթեղիս մէջն են թաղուած,

Ուր կը լսեմ լուռ յուզումին մըտերիմ՝
Անոյ խօսքեր մղով ու ցած:

Նարեկս է լոյս, խոցուած կողէն թափանցիկ
Իմ չարչարուած Յիսուսին,
Արձազանգուած տիեզերքի մէջն ալիք,
Եւ անսահման՝ իւր ուղին:

Կ'ուենկնդրեմ ես խուլ հեքերու գոչումին
Անդունդն հոգւոյն խորթափանց.

Ձոհագործուած համախարհի քաւումին,
Կուրծքն է մեղքով ճեղքուած:

Ո'վ դաւանանք աստուածօրէն պաշտելի,
Երբ սէրն ու ցան է խորան,
Խաչով բացուած ճամբան է լոյսն հաւատքի
Ճընշուածներուն յաղթութեան:

Ուր ողբերով արեւելեան կարաւան
Մը կ'երկարի, կ'երկարի՝
Սըրինգ մ'առջէն օծուած լուսնով Նայիրեան՝
Դաշնակելով կը ծորի:

Յանկարծ կ'այրիկ կանաչ սարերն հայկական
Բանաստեղծի տեսիլքով,
Եւ կը փթթին Նարեկիս մէջ մայիսեան
Նրազիկ դիպակ, դրախտի հով:

Սըրտիս կու գայ ձայնը մատաղ գառներուն,
Աղօթքի պէս մանկական,
Մըշակի, օրհնած, հասկերն աստղ, լոյսն այգուն
Աղօթք դարձած կ'ամբառնան: